ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն» Ազգային ժողովի որոշման նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-836-30.04.2024-ՖՎ-012/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն» Ազգային ժողովի որոշման նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-836-30.04.2024-ՖՎ-012/0) (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագիծը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. Նախագծի վերնագրի լիարժեքությունն ապահովելու նպատակով «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ» բառը առաջարկում ենք փոխարինել «ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» բառերով՝ հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 118-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ «Մտքերի փոխանակության ավարտից հետո մինչև 30 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով հանդես է գալիս վարչապետը (…), որից հետո քվեարկության է դրվում պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը»:

2. Նախագծի 1-ին պարբերությունում «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության» բառերն առաջարկում ենք փոխարինել «Սահմանադրության» բառով, իսկ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը» բառերը՝ «Ազգային ժողովը» բառերով՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ սահմանված հասկացությունը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այն է՝ «2. Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»:

3. Նախագծի 2-րդ պարբերությունում կիրառված «դրամ» բառերն առաջարկում ենք փոխարինել «հայկական դրամ» բառերով՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հասկացությունը, այն է՝ «Հայաստանի Հանրապետության արժույթը հայկական դրամն է: (…)»: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված իրավադրույթից:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

Միաժամանակ առաջարկում ենք ներկայացված առաջարկության հիման վրա ապահովել Նախագծով սահմանված կարգավորումների համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ
Կատարող՝ Լ. Պետրոսյան (հեռ.՝ 011-513-248)
10.05.2024թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծին առնչվող Ազգային ժողովի այլ որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծին առնչվող Ազգային ժողովի այլ որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԶԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ
Կատարող՝ Լ. Պետրոսյան (հեռ.՝ 011-513-248)
10.05.2024թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ (փաստաթղթային կոդ՝ Կ-836-30.04.2024-ՖՎ-012/0)

ՀՀ կառավարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը» (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացված է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Համաձայն Հաշվետվության, ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 2,358.8 մլրդ. դրամ, ծախսերը՝ 2,547.6 մլրդ. դրամ, իսկ բյուջեի դեֆիցիտը՝ 188.9 մլրդ. դրամ:

Սույն Հաշվետվության առումով, կարծում ենք, հատկանշական կարելի է համարել հետևյալ տեղեկություններն ու միտումները:

1. 2023 թվականին գրանցվել է ՀՆԱ-ի 8.7% իրական աճ, ինչը կարելի է բավարար նախադրյալ դիտարկել տնտեսության վերականգնման համար: 2023 թվականին համաշխարհային տնտեսական աճը կազմել է 3.1%, ընդ որում՝ ԱՄՆ տնտեսությունը գրանցել է 2.5%, Եվրոգոտու տնտեսությունը՝ 0.4%, Չինաստանի տնտեսությունը՝ 5.2%, իսկ Ռուսաստանի տնտեսությունը՝ 3.6%:

2. Հաշվետու ժամանակաշրջանում գրանցված տնտեսական աճը առավելապես պայմանավորված է եղել հիմնականում ծառայությունների աճով՝ (նպաստումը՝ 6.1 տոկոսային կետ): Արդյունաբերությունը, շինարարությունը և գյուղատնտեսությունը ևս աճել են՝ նպաստելով տնտեսական աճին (նպաստումները՝ համապատասխանաբար 0.3, 1.1 և 0.02 տոկոսային կետեր):

3. 2023 թվականին սպառումն իրական արտահայտությամբ աճել է 8.3%-ով՝ պայմանավորված ինչպես մասնավոր, այնպես էլ պետական սպառման աճով: Մասնավոր սպառման աճին նպաստել են բնակչության տնօրինվող եկամտի և սպառողական

վարկավորման աճերը: Մասնավոր սպառման աճին դրական նպաստում է ունեցել նաև դեպի Հայաստան զբոսաշրջության բարձր աճը:

Հաշվետու տարում կապիտալ ներդրումներն իրական արտահայտությամբ աճել են 14.4%-ով՝ պայմանավորված մասնավոր պետական ներդրումների աճով: Մասնավոր ներդրումների վրա դրական ազդեցություն են ունեցել հիպոտեկային և շինարարության վարկերի ծավալների աճը:

2023 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալներն աճել են 28.7%-ով՝ պայմանավորված արտաքին պահանջարկի աճով (SS, զբոսաշրջիկներին մատուցված ծառայությունների աճ), ինչպես նաև այլ երկրներից ՌԴ ներմուծման սահմանափակումների արդյունքում ՀՀ-ից դեպի ՌԴ արտահանման ծավալների աճով, ինչպես նաև ՀՀ-ից ոսկու արտահանմամբ: Հաշվետու տարում ապրանքների և ծառայությունների ներմուծման ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 28.3%-ով՝ պայմանավորված տնտեսական ակտիվության և ներքին պահանջարկի աճով: Ներմուծման աճին դրական նպաստում է ունեցել նաև արժևորված ազգային արժույթը:

4. 2023 թվականին միջին գնաճը կազմել է 2.0%: Միջին գնաճին առավելապես նպաստել է «Ծառայություններ» ապրանքախմբում արձանագրված 4.5% գների աճը (նպաստումը գնաճին՝ 1.6 տոկոսային կետ), ինչը հիմնականում պայմանավորված է եղել տրանսպորտի ծառայությունների (մասնավորապես՝ օդային մարդատար տրանսպորտի և մարդատար տրանսպորտի գնացքով փոխադրման ծառայությունների), ֆինանսական ծառայությունների, բնակարանների վարձավճարների, հանգստի կազմակերպման համալիր ծառայությունների սակագների աճերով: «Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբում արձանագրվել է -0.5% միջին գնաճի ցուցանիշ (նպաստումը գնաճին՝ -0.3 տոկոսային կետ)՝ հիմնականում պայմանավորված առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների (կարտոֆիլ, յուղեր և ճարպեր, ալյուր և այլ ձավարեղեն, շաքար, բանջարեղեն) գնանկմամբ: «Ալկոհոլային խմիչքներ, ծխախոտային արտադրատեսակներ» խմբում արձանագրվել է 8.5% գնաճ (նպաստումը գնաճին՝ 0.3 տոկոսային կետ), իսկ «Ոչ պարենային ապրանքներ» խմբում արձանագրվել է 1.7% գնաճ (նպաստումը գնաճին՝ 0.4 տոկոսային կետ):

5. 2023 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատությամբ վատթարացել է՝ կազմելով ՀՆԱ-ի 2.1%-ը: Այն հիմնականում պայմանավորված է

դրամական փոխանցումների (հատկապես՝ ՌԴ-ից) նվազմամբ, ինչպես նաև առևտրային հաշվեկշռի վատթարացմամբ: Տնտեսություն ներհոսող դրամական զուտ փոխանցումները 2023 թվականին նվազել են շուրջ 38%-ով՝ պայմանավորված ինչպես ներհոսքի նվազմամբ (հատկապես՝ ՌԴ-ից), այնպես էլ դեպի այլ երկրներ արտահոսքի ավելացմամբ: Նշված զարգացումների արդյունքում 2023 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ում ընթացիկ հաշվի պակասուրդը վատթարացել է 2.9 տոկոսային կետով:

2023 թվականին գրանցվել է արտաքին ապրանքաշրջանառության երկնիշ աճ՝ պայմանավորված տնտեսական բարձր ակտիվությամբ և վերաարտահանման բարձր ծավալներով: Արտաքին ապրանքաշրջանառությունը 2023 թվականի արդյունքներով կազմել է 20,723.1 մլն. ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 46%-ով: Հաշվետու տարում արձանագրվել են դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման երկնիշ աճեր. արտահանումն աճել է 55.3%-ով՝ կազմելով 8,415.2 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 40.2%-ով՝ կազմելով 12,308 մլն ԱՄՆ դոլար: 2023 թվականին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը նախորդ տարվա նկատմամբ խորացել է (48.9%-ով) և կազմել -3,892.8 մլն ԱՄՆ դոլար:

Ներմուծման ծավալների աճին հիմնականում նպաստել են «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (18.4 տոկոսային կետ), «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» (10 տոկոսային կետ), «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» (8.3 տոկոսային կետ) ապրանքախմբերը: Էական բացասական նպաստում ունեցած խումբը «Հանքահումքային արտադրանքն» է, որը ներմուծման աճին հակազդել է 0.9 տոկոսային կետով: Ըստ ապրանքների լայն տնտեսական դասակարգման՝ ներմուծման աճին նպաստել են «Միջանկյալ սպառման ապրանքները» (17.4 տոկոսային կետ, այդ թվում՝ արդյունաբերական մատակարարումները՝ 18.7 տոկոսային կետ), «Կապիտալ ապրանքները» (9.3 տոկոսային կետ), «Վերջնական սպառման ապրանքները» (6.5 տոկոսային կետ) և «Մարդատար ավտոմեքենաները» (7 տոկոսային կետ):

6. 2023 թվականին ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի, եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ արժևորվել է համապատասխանաբար 11%-ով, 8.5%-ով և 39.4%-ով:

7. 2023 թվականին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 2,358.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 14.3%-ով, իսկ ՀՆԱ-ի նկատմամբ կազմել

են 24.8%՝ նախորդ տարվա 24.3%-ի դիմաց, ինչը հիմնականում պայմանավորված է եղել ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների կշռի ավելացմամբ:

Պետական բյուջեի ծախսերը կազմել են 2,547.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 13.6%-ով: Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2022 թվականի նկատմամբ ավելացել է 0.4 տոկոսային կետով՝ կազմելով 26.8%:

ՀՆԱ-ի նկատմամբ, պետական բյուջեի պակասուրդը կազմել է 2.0 տոկոս՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.1 տոկոսային կետով: ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 48.1 տոկոս՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 1.4 տոկոսային կետով:

ՀՀ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

8. ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով տարեկան եկամուտները սահմանվել էին 2,302.0 մլրդ դրամ, ծախսերը՝ շուրջ 2,591.0 մլրդ դրամ, պակասուրդը՝ 288.9 մլրդ դրամ: Տարվա ընթացքում պետական բյուջեի ցուցանիշներում ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում կատարվել են փոփոխություններ: Մասնավորապես, Կառավարությունն իր լիազորությունների շրջանակում 53.9 մլրդ դրամով (2.3%-ով) վերանայել է պետական բյուջեի եկամուտների ցուցանիշը: 20.1 մլրդ դրամի չափով ավելացվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով՝ տնտեսական աճի ու հարկաբյուջետային քաղաքականության վերանայման արդյունքում, 38.7 մլրդ դրամի չափով ավելացվել է այլ եկամուտների ծրագիրը՝ հիմնականում պայմանավորված բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի ու ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտների գծով լրացուցիչ մուտքերով, իսկ պաշտոնական դրամաշնորհների ծրագիրը նվազեցվել է 4.9 մլրդ դրամով՝ պայմանավորված նպատակային ծրագրերի կատարողականով:

2023 թվականին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 2,358.8 մլրդ դրամ, ծախսերը՝ 2,547.6 մլրդ դրամ, պակասուրդը՝ 188.9 մլրդ դրամ: Բյուջեի եկամուտներն ունեցել են ծախսերի համեմատ առավել բարձր կատարողական, արդյունքում արձանագրվել է պակասուրդի ցածր մակարդակ:

2023 թվականին պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 2,358.8 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 102.5% կատարողական, իսկ ճշտված ծրագրի՝ 100.1% կատարողական: Նշված գումարից 2,345.7 մլրդ դրամը կազմել են ներքին աղբյուրներից ստացված եկամուտները՝ ապահովելով սկզբնական ծրագրի 102.7% ը և ճշտված ծրագրի 100% ը, 13.1 մլրդ դրամը ստացվել է պաշտոնական դրամաշնորհների տեսքով, որոնք 23.9% ով զիջել են սկզբնական ծրագրային ցուցանիշը և 6.3% ով գերազանցել ճշտված ծրագրային ցուցանիշը: 2022 թվականի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 14.3% ով կամ 295.7 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է հարկային եկամուտների աճով:

2023 թվականին պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 24.8%՝ բյուջեով կանխատեսված 24.7% ի և նախորդ տարվա 24.3%-ի դիմաց:

9. Պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են շուրջ 2,221.9 մլրդ. դրամ, որոնք 100.8% ով ապահովել են օրենքով հաստատված ցուցանիշը և 99.9% ով՝ ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշը: 2022 թվականի համեմատ հարկային եկամուտներն ու պետական տուրքերն աճել են 15.4%-ով կամ 296 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է շահութահարկի, ԱԱՀ-ի և եկամտային հարկի գծով մուտքերի աճով: 2022 թվականի համեմատ գրեթե բոլոր հարկատեսակների գծով արձանագրվել է մուտքերի աճ, բացառությամբ պետական տուրքի ու բնօգտագործման վճարների գծով մուտքերի: Հարկ է նշել, որ 2023 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ցուցանիշի վրա դրական ազդեցություն են ունեցել տնտեսական ակտիվության, ներմուծման և արտահանման աճը, հարկունակ ոլորտների իրացման շրջանառությունների, աշխատատեղերի ու միջին աշխատավարձի ավելացումը: Միաժամանակ, 2023 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ցուցանիշի վրա նվազեցնող ազդեցություն է ունեցել ԱԱՀ-ի, եկամտային հարկի, ակցիզային հարկի, սոցիալական վճարների և շահութահարկի գծով վերադարձված գումարների աճը, որոնք կազմել են շուրջ 362.9 մլրդ դրամ՝ 38.1%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ ցուցանիշը 2023 թվականին կազմել է 23.4%, որը 0.3 տոկոսային կետով զիջել է կանխատեսված ցուցանիշը և 0.7 տոկոսային կետով՝ գերազանցել 2022 թվականի փաստացի ցուցանիշը:

10. 2023 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքերի 34.5% -ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է շուրջ 767.2 մլրդ. դրամ: Նշված գումարից 516.9 մլրդ. դրամը ստացվել է ներմուծման հարկումից, 250.2 մլրդ. դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: 2022 թվականի համեմատությամբ ԱԱՀ-ի գծով մուտքերն ավելացել են 87.6 մլրդ դրամով:

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 6.7%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 149.4 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 76.0 մլրդ դրամ, իսկ հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 73.4 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ ակցիզային հարկի մուտքերի աճը պայմանավորված է ինչպես հանրապետությունում արտադրվող, այնպես էլ ներմուծվող ենթաակցիզային ապրանքների գծով մուտքերի աճով:

2023 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 14.5%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 321.5 մլրդ դրամ և 44.3%-ով (98.7 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Շահութահարկի գծով պետական բյուջեի մուտքերի վրա իրենց ազդեցությունն են ունեցել ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների շահութահարկի և աղբյուրի մոտ պահվող ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման բազաների աճը: Մասնավորապես, 2023 թվականին ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների համախառն եկամուտները կազմել են 13,751.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 32.2%-ով կամ 3,349.6 մլրդ դրամով: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների 2023 թվականի հարկվող շահույթը կազմել է 1,535.1 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 40.3%-ով կամ 441 մլրդ դրամով: Ռեզիդենտ շահութահարկ վճարողների՝ աղբյուրի մոտ պահվող 2023 թվականի եկամուտները կազմել են 477.6 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 84.2%-ով կամ 218.2 մլրդ դրամով, իսկ վճարված եկամուտներից պահված հարկերը կազմել են 20.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 43.2%-ով կամ 6.1 մլրդ դրամով:

Հաշվետու տարում շուրջ 554.5 մլրդ դրամ են կազմել եկամտային հարկի մուտքերը՝ ապահովելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 25%-ը: Նախորդ տարվա համեմատ եկամտային հարկի 16.8% (79.7 մլրդ դրամ) աճը հիմնականում պայմանավորված է 2023 թվականին աշխատատեղերի և միջին աշխատավարձերի աճով: Մասնավորապես, 2023 թվականին գրանցված աշխատատեղերի թիվը նախորդ տարվա

համեմատ աճել է 5.5%-ով, իսկ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 14.7%-ով: Միաժամանակ, եկամտային հարկի մուտքերի վրա բացասական ազդեցություն է ունեցել եկամտային հարկի գծով վերադարձված գումարների աճը: 2023 թվականին եկամտային հարկի գծով վերադարձված գումարները կազմել են 68.2 մլրդ դրամ՝ 44.2%-ով կամ 20.9 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Բացասական նպաստման չափը կազմել է 3.6%:

2023 թվականին պետական բյուջե մուտքագրված մաքսատուրքը կազմել է 75.3 մլրդ. դրամ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 3.4%-ը: 2023 թվականի ընթացքում ԵԱՏՄ երկրներից (այդ թվում՝ ՀՀ-ից) մաքսատուրքերի բաշխման արդյունքում ստացվել են 73.0 մլրդ դրամ մուտքեր: Նախորդ տարվա համեմատ մաքսատուրքերի գծով մուտքերի աճը կազմել է 18.6 մլրդ դրամ, ինչը հիմնականում պայմանավորված է եղել ներմուծվող ապրանքների ծավալների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 2.3%-ն ապահովվել է շրջանառության հարկի հաշվին՝ կազմելով 52.2 մլրդ դրամ և 28.1%-ով (11.5 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է տնտեսական ակտիվության աճով այն ոլորտներում, որտեղ գործում են շրջանառության հարկով հարկվող գործունեություն ծավալող հարկ վճարողները: Մասնավորապես, 2023 թվականին առևտրի ծավալներն աճել են 11.1%-ով, արդյունաբերական արտադրանքի ծավալները՝ 6.7%-ով, իսկ ծառայությունների ծավալները՝ 10.3%-ով:

2023 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 2.7%-ն ապահովվել է բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի հաշվին: 2023 թվականին դրանց գծով մուտքերը կազմել են 60.6 մլրդ դրամ 2022 թվականի 95.9 մլրդ դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ բնօգտագործման վճարների գծով մուտքերի նվազումը հիմնականում պայմանավորված է հանքարդյունաբերության և բաց հանքերի շահագործման ոլորտում 2022 թվականին 2021 թվականի համեմատ ավելացված արժեքների իրական աճով, որը կազմել է 16.9%: Մասնավորապես՝ պղնձի խտանյութի արտադրության ծավալները նվազել են 14.1%-ով, ցինկի խտանյութինը՝ 6.4%-ով, իսկ մոլիբդենի խտանյութի արտադրության ծավալներն աճել են ընդամենը 0.7%-ով:

Հաշվետու տարվա ընթացքում 90.3 մլրդ. դրամ են կազմել սոցիալական վճարները, 43 մլրդ դրամ՝ դրոշմանիշային վճարները, 10 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության

օգտագործման պարտադիր վճարները, 5.8 մլրդ դրամ՝ ճանապարհային հարկի գծով փաստացի մուտքերը:

11. 2023 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 67.4 դրամ պետական տուրքեր՝ 27.6%-ով գերազանցելով տարեկան ճշտված ծրագիրը: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է լիցենզավորման ենթակա կամ թույլտվություններով գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու ու օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար սահմանված պետական տուրքերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի գծով մուտքերի 36.9% (39.4 մլրդ դրամ) նվազումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով 2021 թվականի սեպտեմբերից պղնձի և մոլիբդենի խտահանքեր արտահանելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար սահմանված պետական տուրքը կիրառվել է մինչև 2022 թվականի սեպտեմբերի 10-ը:

12. 2023 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են շուրջ 13 . 1 մլրդ. դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ 6.3%-ով գերազանցելով ծրագրված ցուցանիշը, որը պայմանավորված է ոչ նպատակային դրամաշնորհների տարեկան ծրագրային ցուցանիշի գերազանցմամբ:

13. 2023 թվականին ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 123.7 մլրդ դրամ՝ 3.3%-ով գերազանցելով տարեկան ծրագրված ցուցանիշը: Վերջինս հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից ու դեպոզիտներից ստացված տոկոսավճարների և օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների ծրագրային ցուցանիշների գերազանցմամբ: Նախորդ տարվա համեմատ այլ եկամուտներն աճել են 1.3% ով կամ 1.6 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների և իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի գերազանցմամբ:

ՀՀ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

14. 2023 թվականին ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերը կազմել են 2,547.6 մլրդ դրամ: Պետական բյուջեի ծախսերի տարեկան ճշտված ծրագիրը կատարվել է 97.1%-ով, շեղումների ընդհանուր գումարի 75%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին, 25%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին:

Ըստ ֆինանսավորման աղբյուրների պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին կատարվել է ծախսերի 97.4%-ը կամ 2,482.5 մլրդ դրամը, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 97.2%-ով: Բյուջեի ծախսերի 2.6%-ը՝ 65.1 մլրդ դրամը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից, որը կազմել է տարեկան ծրագրի 90.5% ը :

Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 13.6%-ով կամ 305 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված կապիտալ ծախսերի, սոցիալական նպաստների և կենսաթոշակների, տոկոսավճարների և դրամաշնորհների աճով:

15. ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը տրամադրվել է 2,075.0 մլրդ. դրամ: Հաշվետու տարում շուրջ 218.0 մլրդ. դրամ տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը: Նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերն աճել են 23 . 9 մլրդ դրամով:

16. 2023 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 494.4 մլրդ դրամ: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշի՝ ծրագրից 3.9% (19.3 մլրդ դրամ) շեղումը և նախորդ տարվա համեմատ 24.2% (92.2 մլրդ դրամ) աճը պայմանավորված են ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերով (կապիտալ ծախսերով):

ՀՀ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

17. ՀՀ 2023 թվականի պետական բյուջեն կատարվել է է 188.9 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով ծրագրի 70.5%-ը և 5.2%-ով (9.3 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

2023 թվականին պակասուրդի ցածր մակարդակ է արձանագրվել նաև ՀՆԱ-ի նկատմամբ, որը կազմել է 2.0%՝ կանխատեսված 3.1%-ի և 2022 թվականի 2.1%-ի դիմաց:

2023 թվականին, ինչպես և նախորդ տարի, պակասուրդն ամբողջությամբ ֆինանսավորվել է ներքին աղբյուրների հաշվին, իսկ արտաքին աղբյուրներից զուտ ֆինանսավորումը եղել է բացասական:

19. 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 4,794.9 մլրդ դրամ (11,845.3 մլն ԱՄՆ դոլար): ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված՝ ՀՀ պետական պարտքի ցուցանիշների աճը նախորդ տարեվերջի համեմատությամբ կազմել է համապատասխանաբար 14.5% և 11.4%: ՀՀ պետական պարտքում 2,631.7 մլրդ դրամը (6,501.5 մլն ԱՄՆ դոլարը) կազմել է արտաքին պարտքը, 2,163.2 մլրդ դրամը (5,343.9 մլն ԱՄՆ դոլարը)՝ ներքին պարտքը:

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը նախորդ տարվա համեմատ դրամային արտահայտությամբ աճել է 608.2 մլրդ դրամով, իսկ դոլարային արտահայտությամբ՝ 1,207.7 մլն ԱՄՆ դոլարով: Աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարության պարտքի աճով՝ համապատասխանաբար 15.2%-ով և 12.0%-ով: 2022 թվականի համեմատ 2023 թվականի տարեվերջին ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի ցուցանիշը դոլարային արտահայտությամբ նվազել է աննշան չափով (0.1%-ով) և կազմել է 550.8 մլն ԱՄՆ դոլար:

ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը պետական պարտքի ծավալում կազմել է 95.4%, իսկ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի կշիռը՝ 4.6%:

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է ՀՆԱ-ի 50.5%-ը՝ նախորդ տարեվերջի համեմատ աճելով 1.2 տոկոսային կետով: Ընդ որում կառավարության պարտքը կազմել է ՀՆԱ-ի 48.1%-ը՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.4 տոկոսային կետով:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ
Կատարող՝ գլխավոր մասնագետ Գ. Կիրակոսյան (Հեռ.՝ 011 513-603)
13.05.2024թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

Կառավարության կողմից ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը» (այսուհետ՝ Հաշվետվություն): Այն համապատասխանում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի պահանջներին:

Սոցիալական հիմնախնդիրների տեսանկյունից հատկանշական ենք համարում հետևյալ փաստերի և միտումների արձանագրումը:

1. Տնտեսական բարձր ակտիվության պայմաններում գործազրկությունը նվազել է, իսկ զբաղվածությունը և աշխատավարձերը՝ աճել: 2023 թվականին գործազրկության մակարդակը 2022 թվականի նկատմամբ նվազել է 0.9 տոկոսային կետով՝ կազմելով 12.6 %: Գործազուրկների թիվը նույն ժամանակահատվածում նվազել է 3.1 %-ով՝ կազմելով 171.2 հազ. մարդ, իսկ զբաղվածների թիվն աճել է 4.4%-ով՝ կազմելով 1,184.7 հազ. մարդ:

2. 2023 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նկատմամբ աճել է 14.6%-ով՝ կազմելով 269,994 դրամ: Միջին ամսական անվանական աշխատավարձը պետական հատվածում աճել է 11.4%-ով՝ կազմելով 208,323 դրամ, իսկ ոչ պետականում՝ 15.0%-ով և կազմել է 295,132 դրամ: Իրական աշխատավարձը 2.0% գնաճի պայմաններում աճել է 12.4%-ով:

3. 2022 թվականի համեմատ կենսաթոշակների գծով ծախսերն աճել են՝ հիմնականում պայմանավորված կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների հաշիվներին կատարված հատկացումների և մասնակիցների թվի աճով (տես աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1

ՀՀ պետական բյուջեից տրամադրված նպաստները և կենսաթոշակները (մլրդ դրամ)

	2022թ. փաստ	2023թ. ճշտված պլան	2023թ. փաստ	Կատարո-ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2023թ 2022թ. նկատմամբ (%)
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	**613.1**	**727.7**	**710.2**	**97.6**	**115.8**
Նպաստներ	202.3	277.4	270.3	97.4	133.6
Կենսաթոշակներ	410.8	450.3	439.9	97.7	107.1

4. ՀՀ առողջապահության նախարարության պատասխանատվությամբ 2023 թվականի ընթացքում կատարվել են 12 ծրագրեր, որոնց տրամադրվել է 139.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 97.1%-ը, ընդ որում՝ գրեթե բոլոր ծրագրերում արձանագրվել են շեղումներ (տես աղյուսակ 2-ը):

Աղյուսակ 2

2023թ. ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2022թ. փաստ	2023թ. ճշտված պլան	2023թ. փաստ	Կատարո-ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2023թ. 2022թ. նկատմամբ (%)	2023թ. և 2022թ. տարբե-րությունը

ԸՆԴԱՄԵՆԸ	**140,622.3**	**143,628.7**	**139,492.7**	**97.1**	**99.2**	**(1,129.6)**
Հանրային առողջության պահպանում	16,778.9	6,967.7	6,796.3	97.5	40.5	(9,982.6)
Առողջության առաջնային պահպանում	28,292.6	29,536.9	29,346.4	99.4	103.7	(1,053.8)
Մոր և մանկան առողջության պահպանում	19,756.2	121,427.0	21,261.4	99.2	107.6	1,505.1
Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում	18,967.3	21,911.5	21,830.6	99.6	115.1	2,863.3
Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն	35,635.4	37,030.1	36,961.9	99.8	103.7	1,326.5
Այլ ծրագրեր	21,191.9	26,755.6	23,296.2	87.1	109.9	2,104.3

2022 թվականի համեմատ առողջապահության նախարարության ծախսերը նվազել են 0.8%-ով կամ 1.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված Հանրային առողջության պահպանման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

5. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատասխանատվության ներքո 2023 թվականի ընթացքում իրականացվել են 20 ծրագրեր, որոնց շրջանակներում օգտագործվել է 218.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 93.9% կատարողական: Բոլոր ծրագրերում արձանագրվել են շեղումներ: Առանձնապես խոշոր շեղումներ են արձանագրվել Հանրակրթության (3.4 մլրդ դրամ), Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների (2.4 մլրդ դրամ), Ապահով դպրոց (2.4 մլրդ դրամ), Կրթության որակի ապահովման (1.7 մլրդ դրամ) և Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության (1.3 մլրդ դրամ) ծրագրերում:

Նախորդ տարվա համեմատ նախարարության ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների, Ապահով դպրոց, Մեծ նվաճումների սպորտի ու Հանրակրթության ծրագրերի գծով ծախսերի աճով (տես աղյուսակ 3-ը):

Աղյուսակ 3

2023թ. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2022թ. փաստ	2023թ. ճշտված պլան	2023թ. փաստ	Կատարող-ականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2023թ. 2022թ. նկատմամբ (%)	2023թ. և 2022թ. տարբե-րությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	**202,004.2**	**232,998.4**	**218,780.2**	**93.9**	**108.3**	**16,776.0**
Մեծ նվաճումների սպորտ	8,172.6	8,317.8	8,213.9	98.8	100.5	41.4
Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	10,814.2	12,283.0	10,955.8	89.2	101.3	141.6
Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր	12,373.5	13,536.8	12,725.4	94.0	102.8	351.9
Հանրակրթության ծրագիր	103,305.7	118,714.5	115,332.5	97.2	111.6	12,026.7

Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	22,154.0	25,061.5	22,664.8	90.4	102.3	510.7
Արվեստների ծրագիր	10,691.6	13,034.8	12,529.1	96.1	117.2	1,837.6
Ապահով դպրոց	10,511.5	10,080.0	7,667.5	76.1	72.6	2,844.0
Կրթության որակի ապահովում	3,995.4	8,641.1	6,975.0	80.7	174.6	2,979.6
Այլ ծրագրեր	19,985.6	23,328.9	21,716.2	93.1	108.7	1,730.6

6. 2023 թվականի ընթացքում ավելի քան 115.3 մլրդ դրամ է տրամադրվել *Հանրակրթության ծրագրի* շրջանակներում՝ ապահովելով 97.2% կատարողական: Նախորդ տարվա համեմատ Հանրակրթության ծրագրի ծախսերն աճել են 11.6%-ով կամ 12 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված հիմնական ընդհանուր հանրակրթության և «Մոդուլային» տիպի մանկապարտեզների շենքային ապահովում միջոցառման շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Ընդհանուր հանրակրթության ծախսերը 2023 թվականին կատարվել են 99.9%-ով՝ կազմելով 100.4 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր հանրակրթական ուսուցման ծախսերն աճել են 7.7%-ով կամ 7.2 մլրդ դրամով, որը պայմանավորված է հիմնական և միջնակարգ մակարդակներում սովորողների թվի աճով, ինչպես նաև ֆինանսավորման կարգի փոփոխությամբ, որի համաձայն 2023 թվականի սեպտեմբերից հաշվարկները կատարվում են ըստ դասարանների թվի՝ նախկինում աշակերտների թվի փոխարեն (տես աղյուսակ 4-ը):

Աղյուսակ 4

Ընդհանուր հանրակրթության համակարգի ցուցանիշները

	2022թ. սովորողների	**2023թ. սովորողների**	**2023թ. և 2022թ. տարբե-**	**2022թ. փաստ**	**2023թ. փաստ**	**2023թ. 2022թ**

	փաստացի թիվ	փաստացի թիվ	ությունը	(մլն դրամ)	(մլն դրամ)	.-ի նկատմամբ (%)
Ընդհանուր հանրակրթություն	**390,151**	**392,887**	**2,736**	**93,182.1**	**100,394.3**	**107.7**
Տարրական	150,750	150,158	(592)	33,746.5	37,398.1	110.8
Հիմնական	180,803	183,036	2,233	42,363.5	44,650.5	105.4
Միջնակարգ	58,598	59,693	1,095	17,072.2	18,345.7	107.5

7. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատվությամբ 2023 թվականի ընթացքում իրականացվել է պետական բյուջեի 17 ծրագիր, որոնց շրջանակներում օգտագործվել է շուրջ 705.6 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 97.5% կատարողական, ընդ որում՝ բոլոր ծրագրերում արձանագրվել են շեղումներ (տես աղյուսակ 5-ը):

Աղյուսակ 5

2023թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2021թ. փաստ	2022թ. ճշտված պլան	2022թ. փաստ	Կատարող-ականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2022թ. 2021թ. նկատմամբ (%)	2022թ. և 2021թ. տարբեր-ությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	613,585.5	723,885.9	705,.605.4	97.5	115.0	92,019.8

Անապահով սոցիալական խմբերին աջակցություն	27,593.2	27,188.9	26,767.9	98.5	97.0	(825.4)
Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակո՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն	0.0	30,250.9	28,746.0	95.0		28,746.0
Ժողովրդագրական վիճակի բարելավում	39,968.0	53,649.2	53,593.8	99.9	134.1	13,625.7
Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում	20,069.1	21,763.5	21,706.6	99.7	108.2	1,637.5
Կենսաթոշակային ապահովություն	411,947.2	451,192.6	440,752.4	97.7	107.0	28,805.2
Սոցիալական ապահովություն	73,898.9	93,513.0	91,136.3	95.0		28,746.0
Այլ ծրագրեր	40,109.1	46,327.8	42,902.5	92.6	107.0	2,793.4

Նախորդ տարվա համեմատ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ծախսերն աճել են 15%-ով կամ 92 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված Կենսաթոշակային ապահովության, Սոցիալական ապահովության և Ժողովրդագրական վիճակի բարելավման ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով, ինչպես նաև ,Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների

հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն միջոցառման ֆինանսավորմամբ, որը 2022 թվականին նախատեսված չէր:

8. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պատասխանատվությամբ 2023 թվականի ընթացքում կատարվել է պետական բյուջեի 6 ծրագիր, որոնց գծով ծախսերը կազմել են 9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 85%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նախարարության ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման և պահպանման, ինչպես նաև Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և մոնիթորինգի ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ արձանագրվել է նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի 23.9% (1.7 մլրդ դրամ) աճ:

Աղյուսակ 6

2023թ. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2022թ. փաստ	2023թ. ճշտված պլան	2023թ. փաստ	Կատարո-ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2023թ. 2022թ.-ի նկատմամբ (%)	2023թ. և 2022թ. տարբե-րությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	**7,281.3**	**10,611.7**	**9,023.8**	**85.0**	**123.9**	**1,742.5**
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ	1,795.1	2,227.5	1,999.0	89.7	111.4	203.9
Բնական պաշարների և բնության հատուկ	1,821.2	3,166.3	1,928.8	60.9	105.9	107.6

պահպանվող տարածքների կառավարում և պահպանում						
Անտառների կառավարում	2,139.7	2,933.3	2,931.2	99.9	137.0	791.5
Այլ ծրագրեր	1,525.3	2,284.5	2,164.7	94.8	141.9	639.5

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԼԻԼԻԹ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կատարող՝ Մ. Դալլաքյան (հեռ.՝ 011-513-235, 12-35)

16.05.2024թ.